ԱՐԱՄ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱԼԵՊԱՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԸ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1950-2007ԹԹ.

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Անատոլիայի գավառներում գործող առողջապահական արհեստավարժ անձնակազմի զգալի տոկոսը հայեր էին, որոնք կրթություն էին ստացել օտար հաստատություններում: Պատերազմի ժամանակ շատ բժիշկներ՝ այդ թվում հայերը, զորակոչվեցին բանակ: 1915թ. տեղի ունեցած հայ ժողովրդի կոտորածի ու տեղահանման ժամանակ խնայվեց հայ բժիշկների մեծամասնության կյանքը, քանի որ Օսմանյան կայսրությունն ուներ բժիշկների կարիք: Պատերազմից հետո մեծ թվով հայ բժիշկներ ապաստան գտան Սիրիայում: Այդ ժամանակ Հալեպում գործող շուրջ երկու տասնյակ հայ բժիշկներին ավելացան ևս մոտ 60-ը: Նրանցից շատերը գործի անցան պետական մի շարք հիմնարկներում: Նախքան Առաջին համաշխարհային պատերազմը Հալեպում գործում էին մի քանի մեծանուն հայ բժիշկներ, այդ թվում Սամվել Շմավոնյանը, Թորոս Հովակիմյանը, Վահան Թոփալյանը, Ավետիս Ջեբեջյանը: Մեծ համբավ էր վայելում Ասատուր Ալթունյանը:

Հալեպ քաղաքում բժշկության բնագավառում հայերն ունեցել են և այսօր էլ ունեն մեծ հեղինակություն: Լինելով բարձր վարձատրվող և մեծ պահանջարկ վայելող մասնագիտություն, բժշկությունը մեծ տարածում գտավ հայերի շրջանում: Հայ երիտասարդները, բժշկական կրթություն ստանալով եվրոպական երկրներում, 1950-ական թթ. նաև հայրենիքում, վերադառնում էին Հալեպ և ծառայում ոչ միայն հայ համայնքին, այլև ողջ քաղաքին: Ընդհանրապես հայերի դերը Սիրիայի, հատկապես Հալեպ քաղաքի առողջապահության ասպարեզում չափազանց մեծ է: Բազմաթիվ պետական հիմնարկությունների բժիշկների զգալի մասը հայեր էին: Բացվեցին նաև մի շարք հայկական հիվանդանոցներ, կլինիկաներ, ծննդատներ, որոնց հիվանդների մեծ մասը հենց արաբներ էին:

Անչափ մեծ է Ասատուր Ալթունյանի դերը Սիրիայի առողջապահության մեջ: Ա. Ալթունյանը ծնունդով Սեբաստիայից էր: Բժշկական կրթություն էր ստացել Այնթապի ամերիկյան բժշկական վարժարանում: Մասնագիտական խորաց-

ված կրթություն ստանալու նպատակով մեկնեց ԱՄՆ, ապա Գերմանիա և բժշկական կրթություն ստացավ Հայդելբերգի համալսարանում: Համիդյան ջարդերի ժամանակ Ալթունյանը մեկնեց Եվրոպա, սակայն 1889թ. հաստատվեց Հալեպում, ուր տարիների ընթացքում ծեռք բերեց մեծ հռչակ[1]: Ալթունյանի ջանքերով նշանակալի առաջընթաց գրանցվեց վիրաբուժության բնագավառում: Նա օգտագործում էր միկրոսկոպը, ուներ իր սեփական լաբորատորիան: Դեռ նոր էր եղել Ռենտգենի գյուտը, երբ Ալթունյանը այն ներմուծեց Հալեպ: 1912թ. Ալթունյանը ստեղծեց իր սեփական հիվանդանոցը, որը հագեցած էր ամենավերջին արդիական բժշկական սարքավորումներով: Հիվանդանոցն ուներ իր դեղատունը, իսկ 1927թ. հիվանդանոցին կից բացվեց բուժքույրեր պատրաստելու դպրոց: Թեև Ասատուր Ալթունյանը մահացավ 1950թվականին, նրա գործը շարունակեց որդին՝ Էռնեստ Ալթունյանը: 1956թ. Էռնեստը հեռանում է Հալեպից, իսկ 1962թ. անսպասելիորեն փակվում է այս հրաշալի հաստատությունը: Մեծ էր Ասատուր Ալթունյանի և նրա հիմնած հիվանդանոցի դերը Հալեպի առողջապահության մեջ: Ասատուրը վայելում էր ոչ միայն հայ համայնքի, այլև ողջ արաբ ազգաբնակչության և երկրի ղեկավարության հարգանքը: Դժվար թե գտնվեր մի հալեպցի, որը լսած չլիներ մեծանուն հայ բժշկի հրաշագործությունների մասին[2]:

Մեկ այլ հայկական հիվանդանոց հիմնվեց Ավետիս Զեբեջյանի և Ֆիլիպ Հովնանյանի համագործակցության արդյունքում, որոնք երկուսն էլ Բեյրութի Ամերիկյան համալսարանի շրջանավարտներ էին: Ֆիլիպը փորձ էր ծեռք բերել աշխատելով երկաթուղու գերմանական ընկերությունում՝ ղեկավարելով ոչ շատ մեծ դաշտային հիվանդանոց, իսկ Ավետիս Զեբեջյանը Այնթապի ամերիկայն հիվանդանոցում եռամսյա աշխատանքից հետո մեկնել էր Շվեյցարիա, ուր կատարելագործել էր իր վիրաբուժական գիտելիքները հայտնի բժիշկ պրոֆեսոր Քոխրի կլինիկայում: Զեբեջյան-Հովնանայան հիվանդանոցը անչափ կարևոր մի հաստատություն էր, որը հասանելի էր հասարակ ժողովրդին: Անկախ ազգային պատկանելիությունից, այն խնամք էր տանում գեղջուկ և թշվառ ժողովրդին: 1934թ. նրանց է միանում Ավետիս Զեբեջյանի որդին՝ Ռոբերտ Զեբեջյանը: 1936թ. Ֆիլիպ Հովնանայանի մահից հետո, հիվանդանոցի ղեկավարումը շարունակում են հայր և որդի Զեբեջյանները: Սակայն 1952թ., Ավետիս Զեբեջյանի վախճանվելուց հետո, հիվանդանոցը փակվում է,

---

[1] Սուրիահայ տարեցույց, Հալեպ 1925, էջ 250:
[2] Ռոբերտ Զեբեջյան, *Հալեբի մեծանուն բժշկապետ Ա.Ա.Ալթունյան և իր գործը*, Հալեպ 1969, էջ 57-59:

իսկ որդին՝ Ռոբերտ Զեբեջյանը, որը մասնագիտացել էր ակնաբուժության մեջ, բացում է իր սեփական ակնաբուժարանը:

Հալեպում 2004թ. տվյալներով գործում էին մոտ 4500 բժիշկներ, որոնցից շուրջ 196-ը հայազգի են[3]: Ստորև ներկայացնում ենք այսօր Հալեպում գործող հայազգի բժիշկների ցուցակը ըստ մասնագիտությունների:

Հալեպում գործող հայ բժիշկները	
Հայազգի բժիշկներն ըստ մասնագիտության	Քանակը
քիթ. կոկորդ	6
սրտաբան	12
ակնաբույժ	7
մաշկաբույժ	2
հոգեբույժ, նյարդաբան	2
վիրաբույժ	2
ներքին հիվանդություններ	32
ոսկրային	5
ընդհանուր բժիշկներ	61
գինեկոլոգ	35
ռենգենոլոգ	3
նարկոլոգ	5
բժիշկների ընդհանուր թվաքանակը	196

Միայն համեմատության համար նշենք, որ 1940թ. Հալեպում գործում էին մոտ 260 բժիշկներ, որոնցից շուրջ 80-ը հայեր էին[4]: Այսինքն, եթե 20-րդ դարի կեսերին Հալեպում հայ բժիշկները ունեին չափազանց մեծ դերակատարում, ապա այժմ նրանց դերը բավականին թուլացել է:

Այսօր Հալեպում գործում են մի շարք հայկական առողջապահական հիմնարկներ՝ Ալթունյան (վերաբացված), Մազլումյան. Աստուրյան հիվանդանոցները, Զեբեջյան ակնաբուժարանը, Վերժին Գյուլբենկյան մայրանոցը և Հալեպի հայ ծերանոցը:

1948թ. Ռոբերտ Զեբեջյանի կողմից բացվեց Զեբեջյան ակնաբուժարանը Զեմիլիյե թաղամասում, սակայն 1952թ. Փարիզից Յունեսկոյի կողմից Հալեպ գործուղված պրոֆեսոր Զարեհ Կապլանի կողմից նախագծվեց ակնաբուժարանի նոր ժամանակակից շենք Սեբիլ թաղամասում: Այս նոր շենքն իր դռները բացեց 1952թ. նոյեմբերի 17-ին և ուներ 20 անկողին: 1971թ. ակնաբուժարանը ճանաչում գտավ որպես մասնագիտացման կենտրոն շրջանավարտ բժիշկների համար: Այն առաջին մասնագիտացված ակնաբուժարանն է

[3] Հայ բժիշկների նշյալ ցանկը վերցված է Dalil nikaba attiba, Aleppo, 2004:
[4] Al-Ustadh al-Tabib Taha Ishak al-Qiyali, Tarikh al-Tib wu al-Tibah fi halab, Damascus ,1999, p 154

Հալեպում, որը մեծ նշանակություն ունեցավ Հալեպի առողջապահության մեջ[5]: Ինչ վերաբերում է Զեբեջյան ակնաբուժարանին, ապա այն Հալեպի հայ գաղութի ամենանշանավոր հիմնարկներից մեկն է վերջին հիսուն տարիների ընթացքում: Ակնաբուժարանը, ինչպես վերը նշեցինք, հիմնել է Ռոբերտ Զեբեջյանը՝ հալեպահայ ամենալուրջ մտավորականներից մեկը: Ծնվել է 1909թ. Այնքապում: Նախնական կրթությունը ստացել է Հալեպի Հայկազյան վարժարանում, ապա ավետարանական ծխական նախակրթարանում: Այնուհետև երկրորդական ու բարձրագույն կրթությունը շարունակել է Բեյրութում: Սովորելով Բեյրութի Ամերիկյան համալսարանում՝ ուսման վերջին տարին անցկացրել է Ֆրանսիայում՝ Լիոնի համալսարանում: 1970թ. Ռոբերտ Զեբեջյանը Երևանում պաշտպանում է իր թեկնածուականը՝ դառնալով բժշկական գիտությունների թեկնածու: Ի դեպ նա առաջին սփյուռքահայն էր, որ կարողացավ ձեռք բերել այդ գիտական աստիճանը Հայաստանում: Զեբեջյանը հեղինակ է 50 գիտական աշխատանքների: 1955թ. բժշկի ջանքերով Հալեպում բացվում է «Աբու Ալե ալ-Մաարի» կույրերի դպրոցը: 1947թ. Զեբեջյանը կատարում է աչքի եղջերաթաղանթի պատվաստումը՝ դիակի աչքից վերցրած (առաջին հաջող փորձը Միջին Արևելքում), որի առթիվ 1952թ. նախագահական հրամանագրով օրենք հաստատվեց Սիրիայում, ըստ որի արտոնվում էր դիակի աչքի հեռացնելը կերատոպլաստի գործողության համար[6]: Ռոբերտ Զեբեջյանը Հալեպի այն մտավորականներից է, ում հաջողվել է ճանաչում գտնել նաև Սիրիայի սահմաններից դուրս:

Այժմ ակնաբուժարանի տնօրենի պաշտոնը վարում է Կարապետ Հաճնյանը: Հաճնյանը ծնվել է 1947թ. Հալեպում: Նախնական կրթությունն ստացել է Գերմանիկյան, ապա Մեսրոպյան վարժարաններում, իսկ երկրորդականը՝ Կիլիկյան ճեմարանում: 1975թ.նա ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը[7]:

1935թ. Պատրիկ Գյուլբենկյանի հովանավորությամբ Հալեպում հիմնադրվում է մայրանոց ի հիշատակ բարերարի վաղամեռիկ տիկնոջ Վերժին Գյուլբենկյանի: Մայրանոցն ուներ 14 անկողին: 1946-1953թթ. դարձյալ բարերարի օժանդակությամբ կառուցվում է շենքի երկրորդ հարկը՝ անկողինների թիվը հասցնելով 34-ի, իսկ 1965թ. շենքի հարևանությամբ ավելացվում է մեկ

---

[5] Կ.Հաճնյան, Զեբեջյան ակնաբուժարան, «Գեղարդ», Ե, Սուրիահայ տարեգիրք, Հալեպ,1996, էջ 436:

[6] Ռոբերտ Զեբեջյան, *Ինքնակենսագրություն, հուշեր և գործունեություն, Հալեպ, 1999*,. էջ 143-146:

[7] Կիլիկյան կրթական հաստատության հուշամատյան, Հալեպ, 2004, էջ 740:

այլ կցակառույց: Մայրանոցի հիմնադրումից սկսած հաստատության բժիշկներն են եղել Գևորգ Տավուտլարյանը (1935-1937թթ.), Իսկենտեր Քասիսը (1937-1947), Օսվալտ Հրեշտակյանը (1947-1961), Կրեկուար Ասիսը (1961-1987), Հարություն Մարտիրոսյանը (1967թ. մինչ օրս): Մայրանոցում տարբեր ժամանակներում աշխատել են նաև Անդրանիկ Գարապաճագյանը, Աբրահամ Երեցյանը, Պարգև Անտոնյանը, Գիրքոր Երեցյանը, Պետրոս Թերջանյանը, Զոյա Մադոյանը, Մարի Գազանճյանը և այլոք[8]: Մայրանոցն ունեցել է նաև բազմաթիվ այցելու հայ և արաբ բժիշկներ: 1988թ. Մայրանոցի գլխավոր տնօրեն նշանակվեց Պետրոս Բոյաջյանը, որի հոգատարության շնորհիվ մայրանոցը հիմնովին արդիականացվեց:

Պետրոս Բոյաջյանը ծնվել է Հալեպում 1947թ.: Նախնական կրթությունն ստացել է Արմենյան, ապա Նաճարյան-Գյուլբենկյան վարժարաններում: 1975թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը, որից հետո մասնագիտացել է ՀՀ ԳԱԱ-ում: 1977թ. մեկնում է Մոսկվա, ընդունվում ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի սրտաբանության ինստիտուտ և պաշտպանում դոկտորական ատենախոսությունը՝ ստանալով բժշկական գիտությունների դոկտորի աստիճան: Հեղինակ է 14 բժշկագիտական հոդվածների: 1981թ. վերադառնում է Հալեպ և գործի անցնում որպես սրտաբան: 1988թ. ստանձնել է Վերժին Գյուլբենկյան մայրանոցի տնօրենի պաշտոնը: Պետրոս Բոյաջյանի ջանքերով այս հաստատությունը մեծ զարգացում ապրեց, լիովին վերանորոգվեց շենքը, ունեցավ 24 ժամյա աշխատող շտապ օգնության բաժին[9]:

Հալեպի մեծ համբավ վայելող բժիշկներից է նաև Թորոս Թորանյանը: Նա ծնվել է Հալեպում 1923թ.: Սովորել է Հալեպի Ուսումնասիրաց, Մեսրոպյան, Կյուլպենկյան նախակրթարաններում, ապա ուսումը շարունակել է Ամերիկյան քոլեջում, այնուհետև Կիպրոսի Մելքոնյան վարժարանում: 1970թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը: Վերադառնալով Հալեպ՝ մասնագիտանում է անեստեզիայի մեջ և աշխատանքի է անցնում Դամասկոսի «Մուսեթ» հիվանդանոցում: Այնուհետև աշխատանքի է անցնում Հալեպի պետական համալսարանի հիվանդանոցում, ուր անեստեզիայի բաժնում պաշտոնավարում է շուրջ 12 տարի: Թողնելով բժշկությունը՝ Թորանյանը նվիրվում է գրականությանն ու հրատարակչությանը: Նրա դերը Հալեպի հայ համայնքի համար պարզապես անփոխարինելի է, շատ հաճախ հանդես է գալիս դասախոսություններով, ելույթներ ունենում տարբեր բեմերից: Իսկ նրա հեղինակած և հրատարակու-

---

[8] Ոսկեմատյան Վիրժին Գյուլբենկյան Մայրանոցի 1935-1985թթ. , Հալեպ, 1985, էջ 41-71:
[9] » Յո Երթաս Հայ Սփյուռք«. Հալեպ, 1988, էջ 39:

թյան համար հովանավորած գրքերի թիվը անցնում է 200-ից: Այսօր վստահորեն կարելի է ասել, որ Թորանյանը Հալեպի ամենալուրջ հայ մտավորական դեմքերից է, որը շատ մեծ կապեր ունի ինչպես հայրենիքում, այնպես էլ աշխարհի բազմաթիվ երկրներում: Ունեցել է, և այսօր էլ ունի բազմաթիվ հրավերներ աշխարհի շատ ու շատ երկրներից: Նա նաև Հայաստանի գրողների միության, ինչպես նաև Բերիո թեմի գրողների շրջանակի անդամ է:

Ալեքսան Քեշիշյանը ծնվել է Հալեպում: Նախնական կրթությունն ստացել է Հալեպի Կրթասիրաց վարժարանում, այնուհետև ամերիկյան քոլեջում: 1971թ. ավարտում է Երևանի բժշկական ինստիտուտը ու վերադառնում է Հալեպ: Մասնագիտական կրթություն ստանալու նպատակով ընդունվում է Ջեբեջյան ակնաբուժարան, որտեղ 1975թ. ստացել է ակնաբույժի վկայական: Բացի բժշկական գործունեությունից նա զբաղվել է նաև թարգմանչական գործունեությամբ՝ արաբերեն թարգմանելով հայկական հարցին վերաբերող մի քանի գրքեր: Քեշիշյանը շուրջ 15 տարի վարել է նաև ՀԲԸՄ առողջապահական և կրթական հանձնախմբերում վարչական պաշտոններ[10]:

Պետրոս Տարագճյանը ծնվել է Հալեպում 1942թ.: Նախնական ուսումը ստացել է Կրթասիրաց և Կիլիկյան վարժարաններում, իսկ միջնակարգն ու երկրորդականը՝ արաբական Մաարի և հայկական Լազար Նաճարյան-Գալուստ Գյուլբենկյան վարժարաններում: 1971թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը: 1977թ. եղել է Հարութ Գարակոզյան հաստատության բժիշկ, իսկ 1981թ. ստանձնել է Սիրիայի մասնաճյուղի տնօրենի պաշտոնը:

Հալեպի հանրածանոթ կնախտաբաններից Իսկենտեր Քասիսը 1947թ. հիմնեց իր սեփական ծննդատունը, որը բավական հեղինակություն ուներ, քանի որ համալրված էր արդիական սարքավորումներով: Վերջինիս վստահում էին հատկապես վերնախավի կանայք[11]: Շատ հետաքրքիր տեղեկություն ենք քաղում «Արևելք» օրաթերթից: Այնտեղ մասնավորապես նշվում է, որ Հալեպի հանրածանոթ կնախտաբաններից մեկը՝ դոկտոր Իսկենտեր Քասիսը Սաուդյան Արաբիայի իշխան Ֆահտ իբն Սաուդի հրավերով մեկնեց Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք էր Ռիյադ, իր կնոջ՝ իշխանուհի Նաժուայի ծննդաբերության համար: Բժշկի համար հատկացվեց մասնավոր ինքնաթիռ[12]:

---

[10] Սույն տեղեկությունը ստացել եմ Լուիզ Ջեբեջյանի հետ անձնական հարցազրույցից, Հալեպ, 19 ապրիլի 2008թ.:

[11] Ռոբերտ Ջեբեջյան, Դոկտոր Իսկենտեր Քասիս և իր մայրանոցը Հալեպում: »Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, հատոր Ե, Հալեպ 1996, էջ 433-434 :

[12] «Արևելք» օրաթերթ, Հալեպ, 23 հունվար 1961:

Հալեպում հայ համայնքը մշտապես ունեցել է իրենց գործին քաջատեղյակ դեղագործներ, որոնցից շատերը Հալեպում բացել են իրենց դեղատները և գործում են ոչ միայն հայ համայնքի, այլ նաև քաղաքի ողջ ազգաբնակչության համար: Հետաքրքիր է, որ 1930-ական թթ. Հալեպում հայերի էին պատկանում մոտ 30 դեղատներ[13]: Պատկերը թերևս նույնն է նաև այսօր: Այժմ Հալեպում գործում են 28 հայկական դեղատներ[14]:

Եզրակացություն

Այսպիսով տարիների ընթացքում Հալեպում և ընդհանրապես Սիրիայում ստեղծվեց հայ բժշկի կերպարը, որին արաբ հիվանդները ավելի էին վստահում և հավատում քան ուրիշներին: Վերոհիշյալ հայ բժիշկների որակյալ և նվիրական գործունեությունը խիստ բարձրացրեց հայ բժշկի և ընդհանրապես հայի հեղինակությունը Հալեպում:

Այժմ էլ Հալեպում մեծ թիվ են կազմում հայ որակյալ բժիշկները, սակայն նրանց գործունեությունը վերջին տասնամյակում փոքր ինչ համեստացել է, քանի որ սիրիական պետությունը առողջապահությանը սկսեց մեծ ուշադրություն դարձնել: Արաբ ուսանողները սկսեցին գործուղվել տարբեր եվրպական երկրներ՝ ստանալով որակյալ բժշկական կրթություն, հովանավորվեցին պետական հիվանդանոցները՝ համալրվելով արդիական բժշկական սարքավորումներով ու դեղորայքներով: Այս դեպքում իհարկե արաբ հիվանդը սկսեց գերադասել պետական հիվանդանոցները, որտեղ բուժօգնությունն անվճար էր, իսկ որակական առումով չեր զիջում հայկականներին:

---

[13] **«Զարթոնք»** օրաթերթ, Բեյրութ, 10 օգոստոս 1984:
[14] **«Շավիղ»** գ. Հալեպ, 2002, էջ 34-38: